Իզուր չէ, որ Ճապոնը երեխաների դրախտ են կոչում:

Ճապոնումն էլ է արդէն սկիզբն առել կանանց ազատագրութեան շարժումը:

Արդէն գոյութիւն ունի մի կանանց միութիւն, որ եռանդուն պայքար է մղում: Նրանք արդէն մի քանի անգամ ներկայացրել են կառավարութեանը իրանց պահանջները հազարաւոր ստորագրութիւններով. ձգտում են, որ կանանց համար էլ մատչելի լինեն հետզհետէ այն բոլոր պաշտօնները, որ մինչեւ այժմ միայն տղամարդկանց են վերապահւած, եւ արդէն մասամբ էլ ձեռք են բերել:

Այսպէս նրանք ընդունւած են պօստ-հեռագրական ծառայութեան մէջ, ինչպէս եւ երկաթուղու: Երևի շուտով կը տեսնենք ասպարէզի վրա եւ կին փաստաբան:

Օրէնսդրութեան մէջ հետզհետէ մտնում են բարեփոխութիւններ ի նպաստ կանանց:

Օրէնքը այլեւս հարճ չի ճանաչում, որ մի ժամանակ ընտանիքի մէջ երկրորդ տեղն էր բռնում օրինաւոր կնոջ կողքին: Եթէ կինը ամուլ էր, օրէնքը թոյլ էր տալիս, որ հարճ պահեն, եւ նրանից ծնւած երեխաները համարւում էին օրինաւոր: Նոյն իսկ թագաժառանգը մի հարճի որդի է:

Բայց միւս կողմից այդ նոր կանայք շատ դժգոհ են ապահարզանի օրէնքից: Եւ իրաւացի են:

Ամուսինների բաժանումը թէեւ շատ հեշտ է, բայց բոլոր առաւելութիւնները, ինչպէս եւ Եւրոպայում, մնում են տղամարդու կողմը: Երեխաները պատկանում են հօրը:

Պրոպագանդիստ կանանցից ոմանք յայտնի են եւ Եւրո-